CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA
DEPUTY CHAIRMAN

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАМЕСТИТЕЛЬ ПРЕДСЕДАТЕЛЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.:(37410) 589 611
Fax:(37410) 587 306

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 6
Հեռ.՝ (37410) 589 611
Ֆաքս՝ (37410) 587 306

0010,Ереван, Вазгена Саркисяна,6
Тел.: (37410) 589 611
Факс: (37410) 587 306

09.06.2014 N 15.1-04/0158-14

Ձեր N

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար
պարոն Դավիթ Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան

Ձեզ ենք ներկայացնում Միջազգային Զարգացման Ընկերակցության վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը առաջարկվող զարգացման քաղաքականության գործառնության (DPO 1) ծրագրային փաստաթղթով և տեխնիկական առաջարկություններով պայմանավորված ««Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, դրանց ընդունման հիմնավորումը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված անհրաժեշտ տեղեկանքները, շահագրգիռ գերատեսչությունների դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ ամփոփաթերթը և կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Քաղաքականության գործառնության (DPO 1) ծրագրային փաստաթղթի և տեխնիկական առաջարկությունների համաձայն նշված նախագծերը ՀՀ Ազգային ժողովի կողմից պետք է ընդունվեն մինչև 2014 թվականի դեկտեմբերի 30-ը:

Խնդրում ենք հանձնարարել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանմանը նախագծերը ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը:

Առդիր՝ 31 էջ:

Հ.Հ. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔ
Գրանցման համար 079-17168
09.06.2014

Հարգանքով՝

Ներսես Երիցյան

Կատարող՝ Ն.Կիրակոսյան

10063380

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

11.03.2014 N ՊՊ06.1/2148-14

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Երիցյան

Ի պատասխան Ձեր՝ 28.02.2014թ. №15.1-07/00041-14 գրության կից ներկայացվում է «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ առողջապահության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԴԵՐՅԱՆ ՍՈՒՄԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐԱՆ
ДЕРЯНСКИЙ
СЕКРЕТАРИАТ

Կատարող՝ Արթուր Աթոյան
Ֆինանսատնտեսագիտական
բաժին, հեռ.564121

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի
սեպտեմբերի 23-ի N 1104-Ն որոշման պահանջներով

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

10063104

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

«4» 03 2014 թ.

N ԱԱ/ՀՍ-2-21/1304-14

Ձեր 21.02.2014թ. N 15.1-07/000200-14

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ջավադյան

Ձեզ եմ ներկայացնում «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին, «Վարկային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», Բանկերի և բանկային գործունեության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կատարող՝ վերլուծության և մոնիթորինգի վարչություն, հեռ՝ 56 30 75

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

Եզրակացություն

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին, «Վարկային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», Բանկերի և բանկային գործունեության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին, «Վարկային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», Բանկերի և բանկային գործունեության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն:**

կատ. Ս. Մարտիրոսյան
վերլուծության և մոնիթորինգի վարչություն

10063765

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

MINISTER

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МИНИСТР

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
Էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ccxhqxy@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 10) 52 10 99
☎ (374 10) 54 08 57

№ 1/01.2/10526

«19» 03 2014թ.

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
պարոն Ն. Երիցյանին

Հարգելի պարոն Երիցյան

Ի պատասխան Ձեր 28.02.2014թ. N 15.1-07/00042-14 գրության, ներկայացնում եմ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Ա. Հարությունյան

Հարությունյան
567535

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

10063909

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երեւան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 12

25.03.14 № 4/12.4/4404-14

Ձեր №

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
տեղակալ՝ պարոն Ներսես Երիցյանին

Հարգելի պարոն Երիցյան

Ս.թ. փետրվարի 28-ի Ձեր թիվ 15.1-07/00044-14 գրությամբ ներկայացված՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ հայտնում ենք, որ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Կից ներկայացնում ենք վերոնշյալ նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը՝ կազմված ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1021-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

Պավել Սաֆարյան

Կատ.՝ Ֆինանսական շուկայի զարգացման վարչություն
Հեռ.՝ 060 700 124

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերով առաջարկվում է՝

1) սահմանել, որ սպառողների կողմից վարկային բյուրոյի դեմ ներկայացվող բողոքները ևս քննվում են ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից: Ընդ որում՝ առաջարկվում է սահմանել, որ վարկային բյուրոն ֆինանսական հաշտարարի գրասենյակին վճարում է տարեկան 140 հազար դրամ պարտադիր վճար,

2) բանկերի և այլ վարկատու կազմակերպությունների համար սահմանել հաճախորդին տեղեկատվության բացահայտման մեխանիզմներ և նրա հետ վարվելակերպի կանոններ: Միաժամանակ առաջարկվում է սահմանել, որ նշյալ պահանջների խախտման փաստը հաստատվելու դեպքում բանկը կամ վարկային կազմակերպությունը պարտավոր է հաճախորդին 30 օրվա ընթացքում վճարել երեք հարյուր հազար դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծերի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կլինի ոչ էական:

Նախագծերի ընդունումը կամ չընդունումը ՀՀ պետական բյուջեի և ՀՀ համայնքների բյուջեների ծախսերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխման չի հանգեցնում:

10063970

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան 10, Մ.Մկրտչյան 5
Հեռ. 59-72-07, Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 01/10.2.1/1727-14
«25» 03 2014 թ

Ձեր № 15.1-07/00043-14
2014-02-28

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ջավադյան,

Ներկայացվում են «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ՎԱՀՐԱՄ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ Գոռ Սարգսյան
597134

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***դրական ազդեցություն:***

Նախագծով նախատեսվում է մեծացնել ոչ սպառողական վարկերի հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև վարկային բյուրոյի դեմ բողոքների քննման իրավասությունը հանձնել նաև ֆինանսական հաշտարարին: Նախագիծը կնպաստի ՓՄՁ սուբյեկտների վարկավորման գործընթացների պարզեցմանը և հստակեցմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԿԱՐԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) վարկային բյուրոյի դեմ ուղղված բողոքները ևս կքննվեն ֆինանսական հաշտարարի կողմից, ինչպես նաև Նախագծերի ընդունման դեպքում բանկերը պետք է ունենան իրենց կառավարման բարձրագույն մարմնի կողմից հաստատված գործարար վարվելակերպի կանոնները:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

/ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

10066821

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41 մ, հեռ. 380389
Էլ. փոստ՝ press@moj.am

01/3444-14
27.05.14

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
պարոն Ա. Ջավադյանին

**Ի պատասխան Ձեր 2014 թվականի ապրիլի 17-ի
15.1-06/000369-14 թվակիր նամակի**

Հարգելի պարոն Ջավադյան

Կից ներկայացնում ենք «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի առնչությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

Հարգանքով՝ **Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Կատարող՝ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ս. Առաքելյան հեռ. 380-227

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ Կ. ԽՏՐՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Այսպես՝ նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում են դրույթներ, որոնց համաձայն կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով բանկերի գործարար վարվելակերպի կամ դրանց մի մասի բովանդակության նկատմամբ կարող են սահմանվել մանրամասն պահանջներ: Այսինքն՝ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերով բանկերի նկատմամբ սահմանվելու են վարքագծի կանոններ, ինչը չի բխում ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից, որոնց համաձայն բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները: Այդ առումով բանկերի գործարար վարվելակերպի կանոններ սահմանելն օրենքի կարգավորման առարկան է:

Բացի այդ, նախագծի հիշյալ հոդվածի 1.1-րդ մասի 3-րդ կետի համաձայն «հաճախորդների իրավունքների պաշտպանությանը վերաբերող այլ հարցերը» նույնպես պետք է սահմանվեն ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով, որը վերաբերելու է գործարար վարվելակերպի կանոններին, ինչը նույնպես չի բխում ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից, քանի որ հաճախորդների իրավունքների պաշտպանությանը վերաբերող այլ հարցերը նույնպես օրենքի կարգավորման առարկան են և դրանք պետք է սպառիչ սահմանվեն օրենքում:

Միաժամանակ նախագծի հիշյալ հոդվածով նախատեսվում են դրույթներ, որոնց համաձայն գործարար վարվելակերպի կանոնների պահանջների խախտման դեպքում

բանկը հաճախորդին պարտավոր է վճարել երեք հարյուր հազար դրամ: Այսինքն՝ ստացվում է, որ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված գործարար վարվելակերպի կանոններով պատասխանատվություն է սահմանվում այն բանկերի համար, որոնք խախտում են հիշյալ կանոնները: Այդ առումով հիշյալ դրույթները նույնպես չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին, որոնց համաձայն բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում իրավաբանական անձանց պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը:

Հարկ է նաև նշել, որ նախագծի հիշյալ հոդվածով արդեն իսկ սահմանված են բանկերի գործարար վարվելակերպի որոշ կանոններ:

Ելնելով վերոգրյալից՝ բանկերի գործարար վարվելակերպի կանոններն անհրաժեշտ է սպառիչ թվարկել օրենքով՝ նկատի ունենալով, որ հիշյալ կանոններով բանկերի համար սահմանվում են վարքագծի կանոններ, իսկ դրանք չպահպանելու համար պատասխանատվություն նախատեսող դրույթներ:

Նույնը վերաբերում է նաև «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածին:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

2. Նախագծերը համապատասխանում են հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:

3. Նախագծերում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Իրավական ակտերում համապատասխան լրացումներ կատարելու անհրաժեշտությունն առկա է:

5. Նախագծերում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:

6. Նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

1) «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածում նշված «ենթակետում» բառն անհրաժեշտ է փոխարինել «կետում» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Բացի այդ, հիշյալ հոդվածով լրացվող «վարկային բյուրոյի դեմ ներկայացված պահանջի դեպքում՝ դրա առկայության պարագայում» բառերն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջները:

2) Նախագծի 4-րդ հոդվածում նշված «ենթակետով» բառն անհրաժեշտ է փոխարինել «կետով» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

3) Նախագծի 4-րդ հոդվածի հետո նշված հոդվածի համարակալումը կրկնվում է և վերանայման կարիք ունի՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները:

4) Նախագծի 4-րդ հոդվածի վերնագրում նշված «օրենքի ուժի մեջ մտնելը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «եզրափակիչ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում նշված «1¹» թիվն անհրաժեշտ է փոխարինել «1.1» թվով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները:

Նույն հոդվածում նշված «ընդ որում» բառերն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջները:

8. Նախագծերն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 1-ին և 7-րդ կետերին:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

««Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների

Հ/հ	Առաջարկության հեղինակ	Առաջարկության բովանդակությունը	Կենտրոնական բանկի դիրքորոշումը
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն:
2.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն:
3.	ՀՀ արդարադատության նախարարություն	1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Այսպես՝ նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում են դրույթներ, որոնց համաձայն կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով բանկերի գործարար վարվելակերպի կամ դրանց մի մասի	Ընդունելի չէ: ՀՀ կենտրոնական բանկի կողմից նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասությունը նախատեսված է նախագծով, որի ընդունման պարագայում պահպանված կլինի ՀՀ Սահմանադրության հիշատակված հոդվածը, քանի որ օրենքն է նախատեսում

		բովանդակության նկատմամբ կարող են սահմանվել մանրամասն պահանջներ: Այսինքն՝ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերով բանկերի նկատմամբ սահմանվելու են վարքագծի կանոններ, ինչը չի բխում ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից, որոնց համաձայն բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները: Այդ առումով բանկերի գործարար վարվելակերպի կանոններ սահմանելն օրենքի կարգավորման առարկան է: Բացի այդ, նախագծի հիշյալ հոդվածի 1.1-րդ մասի 3-րդ կետի համաձայն «հաճախորդների իրավունքների պաշտպանությանը վերաբերող այլ հարցերը» նույնպես պետք է սահմանվեն ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով, որը վերաբերելու է գործարար վարվելակերպի կանոններին, ինչը նույնպես չի բխում ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից, քանի որ հաճախորդների իրավունքների պաշտպանությանը վերաբերող այլ հարցերը նույնպես օրենքի կարգավորման առարկան են և դրանք պետք է սպառիչ սահմանվեն օրենքում:	վարվելակերպի կանոնների կամ դրանց մի մասի բովանդակության նկատմամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտ սահմանելու իրավասությունը:

		2. Միաժամանակ նախագծի հիշյալ հոդվածով նախատեսվում են դրույթներ, որոնց համաձայն գործարար վարվելակերպի կանոնների պահանջների խախտման դեպքում բանկը հաճախորդին պարտավոր է վճարել երեք հարյուր հազար դրամ: Այսինքն՝ ստացվում է, որ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված գործարար վարվելակերպի կանոններով պատասխանատվություն է սահմանվում այն բանկերի համար, որոնք խախտում են հիշյալ կանոնները: Այդ առումով հիշյալ դրույթները նույնպես չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին, որոնց համաձայն բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում իրավաբանական անձանց պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը: Հարկ է նաև նշել, որ նախագծի հիշյալ հոդվածով արդեն իսկ սահմանված են բանկերի գործարար վարվելակերպի որոշ կանոններ: Ելնելով վերոգրյալից՝ բանկերի գործարար վարվելակերպի կանոններն անհրաժեշտ է սպառիչ թվարկել օրենքով՝ նկատի ունենալով, որ հիշյալ կանոններով բանկերի համար սահմանվում են վարքագծի կանոններ, իսկ դրանք չպահպանելու համար պատասխանատվություն նախատեսող դրույթներ:	Ընդունելի չէ, քանի որ պատասխանատվությունը նախատեսվում է օրենքով, այլ ոչ թե ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտով:

		3. Նույնը վերաբերում է նաև «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածին:	Ընդունելի չէ, տես սույն ամփոփաթերթի 1-ին և 2-րդ կետերի հիմնավորումները:
4.		«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	
5.		Նախագծերը համապատասխանում են հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին: Նախագծերում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն: Իրավական ակտերում համապատասխան լրացումներ կատարելու անհրաժեշտությունն առկա է: Նախագծերում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են: Նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը	Ընդունվել է ի գիտություն:

		հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:	
6.		7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝ 1) «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածում նշված «ենթակետում» բառն անհրաժեշտ է փոխարինել «կետում» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Բացի այդ, հիշյալ հոդվածով լրացվող «վարկային բյուրոյի դեմ ներկայացված պահանջի դեպքում՝ դրա առկայության պարագայում» բառերն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջները: 2) Նախագծի 4-րդ հոդվածում նշված «ենթակետով» բառն անհրաժեշտ է փոխարինել «կետով» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: 3) Նախագծի 4-րդ հոդվածի հետո նշված հոդվածի համարակալումը կրկնվում է և վերանայման կարիք ունի՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի	1. Ընդունելի է: Նախագիծը խմբագրվել է: 2. Ընդունելի է: Նախագիծը խմբագրվել է: 3. Ընդունելի է: Նախագիծը խմբագրվել է:

		պահանջները: 4) Նախագծի 4-րդ հոդվածի վերնագրում նշված «օրենքի ուժի մեջ մտնելը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «եզրափակիչ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները: «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում նշված «1[1]» թիվն անհրաժեշտ է փոխարինել «1.1» թվով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները: Նույն հոդվածում նշված «ընդ որում» բառերն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջները:	4. Ընդունելի է: Նախագիծը խմբագրվել է: Ընդունելի է: Նախագիծը խմբագրվել է: Ընդունելի է: «Ընդ որում» բառերը հանվել են:
7.		Նախագծերն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 1-ին և 7-րդ կետերին:	

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածը լրացնել 1.1 մասով հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Բանկերը պետք է ունենան գործարար վարվելակերպի կանոններ, որոնցով պետք է սահմանվեն՝

1) հաճախորդներին տեղեկատվության ներկայացման ձևն ու կարգը,
2) մինչև պայմանագրի կնքումը, պայմանագիրը կնքելիս և պայմանագրի գործողության ընթացքում հաճախորդներին տրամադրվող տեղեկատվության բովանդակությունը և այդ տեղեկատվության տրամադրման ձևը և կարգը, ինչպես նաև հաճախորդների հետ հաղորդակցման կարգը,
3) հաճախորդների իրավունքների պաշտպանությանը վերաբերվող այլ հարցեր:

Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով բանկերի գործարար վարվելակերպի կանոնների կամ դրանց մի մասի բովանդակության նկատմամբ կարող են սահմանվել մանրամասն պահանջներ:

Բանկերը պարտավոր են հետևել սույն մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոններին:

Սույն հոդվածքով նախատեսված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ բանկի կողմից խախտման փաստը դատարանի, արբիտրաժի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաստատվելու դեպքում բանկը պարտավոր է ֆիզիկական անձ հաճախորդին վճարել 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ: Ընդ որում, նշված դրույթը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու ֆիզիկական անձ հաճախորդի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ: Սույն պարբերությունը չի տարածվում «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքով կարգավորվող հարաբերությունների վրա, իսկ բանկի գործունեությունը կարգավորող այլ հարաբերությունների նկատմամբ սույն պարբերությունը կիրառելի է այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ այդ հարաբերությունները կարգավորող այլ օրենքներով:

Հոդված 2. Եզրափակիչ եվ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող

43-րդ հոդվածի 1.1 մասի վերջին պարբերության, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի մեկից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

"ՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. "Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին" Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-185-Ն օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասը՝ «դիմել» բառից հետո լրացնել ««Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով ֆինանսական համակարգի հաշտարարին (ֆիզիկական անձ վարկային տեղեկատվության սուբյեկտի դեպքում) կամ» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման հիմնավորում

Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

««Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է **Միջազգային Զարգացման Ընկերակցություն վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը առաջարկվող զարգացման քաղաքականության գործառնության (DPO) ծրագրային փաստաթղթով և տեխնիկական առաջարկություններով:**

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին», «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքներով այժմ սպառողն իրավունք չունի վարկային բյուրոյի դեմ բողոք ներկայացնելու ֆինանսական համակարգի հաշտարարին, ինչը զրկում է նրանց իրավունքների արագ և անվճար պաշտպանությունից:

Ինչ վերաբերվում է ««Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների փոփոխությունը, ապա խնդիրը կայանում է նրանում, որ ոչ սպառողական վարկային պայմանագրերի կնքման և

սպասարկման վերաբերյալ առկա չէ ԿԲ իրավասությունը պահանջելու այդ գործընթացներում հաճախորդներին որոշակի տեղեկատվության բացահայտման պահանջներ: Այդ պատճառով համաշխարհային բանկի փորձագետները DPO ծրագրի շրջանակներում առաջարկում էին բանկերի և այլ վարկատու կազմակերպությունների համար սպառողական ոլորտի օրենսդրության համանմանությամբ իրենց հաճախորդին տեղեկատվության բացահայտման մեխանիզմներ և նրա հետ վարվելակերպի կանոններ սահմանել:

Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունմամբ՝

- Վարկային բյուրոյի դեմ ուղղված բողոքները ևս կքննվեն ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ նպատակ ունենալով ապահովել հաճախորդի խնդրի արագ և անվճար լուծում.
- Բանկերն ու վարկային կազմակերպությունները պարտավոր կլինեն իրենց հաճախորդներին ծառայություն մատուցելիս պահպանել վարվելակերպի կանոններ (օրինակ՝ վարկ տրամադրելիս բանկը կամ վարկային կազմակերպությունը պարտավոր կլինի զգուշացնել ու վարկային պայմանագրերի մեջ սահմանել, որ եթե հաճախորդը ոչ պատշաճ կատարի իր պարտավորությունը, այդ տեղեկատվությունը կգնա վարկային բյուրո և ԿԲ ռեգիստրը, ինչն էլ անբարենպաստ հետևանքներ կառաջացնի հետագայում իր կողմից վարկ ստանալիս): Կատարվող փոփոխությունները նպատակ են հետապնդում մեխանիզմներ ստեղծել հաճախորդների շահերի լիարժեք պաշտպանության համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

««Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

««Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունման դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝ **Արթուր Ջավադյան**

ՏԵՂԵԿԱՆՔ

««Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ այլ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

««Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության այլ օրենքներում և այլ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանա:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝ **Արթուր Ջավադյան**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 29-ի ՀՕ-359-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9.1-րդ հոդվածի վերնագրում «կանոնադրություններին» բառից հետո լրացնել «և ներքին իրավական ակտերին» բառերը, իսկ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով՝

«Վարկային կազմակերպությունները պետք է ունենան գործարար վարվելակերպի կանոններ, որոնցով պետք է սահմանվեն՝

1) Վարկային կազմակերպության կողմից հաճախորդին տեղեկատվության ներկայացման ձևն ու կարգը,
2) մինչև պայմանագրի կնքումը, պայմանագիրը կնքելիս և պայմանագրի գործողության ընթացքում հաճախորդներին տրամադրվող տեղեկատվության բովանդակությունը և այդ տեղեկատվության տրամադրման ձևը և կարգը, ինչպես նաև հաճախորդների հետ հաղորդակցման կարգը,
3) հաճախորդների իրավունքների պաշտպանությանը վերաբերվող այլ հարցեր:

Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով վարկային կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնների կամ դրանց մի մասի բովանդակության նկատմամբ կարող են սահմանվել մանրամասն պահանջներ:

Վարկային կազմակերպությունները պարտավոր են հետեվել սույն մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոններին:

Սույն հոդվածով նախատեսված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ վարկային կազմակերպության կողմից խախտման փաստը դատարանի, արբիտրաժի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաստատվելու դեպքում վարկային կազմակերպությունը պարտավոր է ֆիզիկական անձ հաճախորդին վճարել (300 000) երեք հարյուր հազար ՀՀ դրամ: Նշված դրույթը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու ֆիզիկական անձ հաճախորդի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ: Սույն պարբերությունը կիրառվում է այնքանով, որքանով այլ օրենքներով նշված հարցերի վերաբերյալ վարկային կազմակերպությունների համար այլ կարգավորում նախատեսված չէ:

Հոդված 2. Եզրափակիչ եվ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի վերջին պարբերության, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի մեկից: